/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

•Գործուղված անձինք
ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

•Երկիր/քաղաք/ ժամկետ
Շվեյցարիա/Ժնև/16.10.-17.10.2019թ.

▪Նպատակը
ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպում

▪ **Քննարկված թեմաները**
Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի (Ս. Մնացականյանը հանդիսանում է Բյուրոյի փոխնախագահ) հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

I. Բացումը Բյուրոյի նախագահ, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության Գլխավոր Տնօրեն Մարյո Բրուունի կողմից

II. Ընտրված վիճակագրական բնագավառների խորացված վերանայումներ

ա. Միջազգային միգրացիա և միջսահմանային շարժունակություն – քննարկման և առաջարկությունների համար

բ. Բարեկեցության չափումը թվային հասարակության դարաշրջանում – քննարկման համար

գ. Պաշտոնական վիճակագրության մեջ արբանյակային պատկերների տվյալների օգտագործման խորացված վերանայմանը հաջորդող գործողություններ – քննարկման և առաջարկությունների համար

դ. Տարբեր տեսակների սատելիտային հաշիվների խորացված վերանայմանը հաջորդող գործողություններ – որոշման համար

ե. Գենդերային ինքնության չափման խորացված վերանայմանը հաջորդող գործողություններ – որոշման համար

III. 2019 Թ. ԵՎԿ ԼԻԱԿԱԶՄ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. 67-րդ լիակազմ նստաշրջանի գնահատում – տեղեկության համար

բ. «Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը» 2019 թ. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի սեմինարին հաջորդող գործողություններ – որոշման համար

IV. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ծրագիր

ա. Առաջատար, բաղադրյալ և զգայուն ցուցանիշներ (հետագա աշխատանք) – որոշման համար

բ. Վիճակագրությունը Կայուն Զարգացման Նպատակների (ԿԶՆ) համար (տեխնիկական առաջադրանքի նորացում) – որոշման համար

գ. Վիճակագրությունը ԿԶՆ-ի համար, զեկույց ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանային հարթակի մշակման վերաբերյալ – քննարկման և առաջարկությունների համար

դ. Վտանգավոր իրադարձությունների ու աղետների չափում (հետագա աշխատանք) որոշման համար

ե. Ինստիտուցիոնալ բնակչության չափումը (հետագա աշխատանք) – որոշման համար

զ. 2020 թվականի վիճակագրական ծրագիրը – որոշման համար

V. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՆ – քննարկման և առաջարկությունների համար

VI. 2020 Թ. ԵՎԿ ԼԻԱԿԱԶՄ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ա. «Գլոբալիզացիայի և թվայնացման ազդեցությունը տնտեսական վիճակագրության ապագայի վրա» թեմայով 2020 թ. ԵՎԿ սեմինարի կազմակերպում – քննարկման և առաջարկությունների համար

բ. «Ազգային վիճակագրական գրասենյակների դերի իրականացումն ընդլայնված հնարավորությունների դարում» թեմայով 2020 թ. ԵՎԿ սեմինարի կազմակերպում – քննարկման և առաջարկությունների համար

գ. Թվային փոխակերպման ավելի լավ չափում – քննարկման և առաջարկությունների համար

դ. ԵՎԿ ուղեցույցներ և առաջարկություններ 2020 թ. հաստատման համար: Տնտեսական տվյալների փոխանակում և տարածում – որոշման համար

ե. ԵՎԿ ուղեցույցներ և առաջարկություններ 2020 թ. հաստատման համար: Տնային

տնտեսությունների ներքին որոշումների կայացումը – որոշման համար

զ. 2020 թ. ԵՎԿ լիակազմ նստաշրջանի նախնական օրակարգն ու ժամանակացույցը – քննարկման և առաջարկությունների համար

VII. Հաջորդ հանդիպումների ժամկետները և վայրը – որոշման համար

VIII. Այլ հարցեր:

Հայաստանը հանդես եկավ ելույթներով «Տվյալների նոր աղբյուրներ, հասանելիությունն ու օգտագործումը», «Վիճակագրությունը ԿԶՆ-ի համար, զեկույց ՄԱԿ ԵՏՀ-ի տարածաշրջանային հարթակի մշակման վերաբերյալ», «Գլոբալիզացիայի և թվայնացման ազդեցությունը տնտեսական վիճակագրության ապագայի վրա», «Ազգային վիճակագրական գրասենյակների դերի իրականացումն ընդլայնված հնարավորությունների դարում», «Տնտեսական տվյալների փոխանակում և տարածում» թեմաներով:

- **Արդյունքները**

Մասնակցությունը Բյուրոյի նիստին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման և վարման լավագույն փորձին, վերջին զարգացումներին, ուղեցույցներին և առաջարկություններին, ամրապնդելու վիճակագրական ներուժը ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը, ինչպես նաև առաջարկություններով ապահովել Հայաստանի ներդրումը միջազգային վիճակագրական փաստաթղթերում:

- **Նշումներ**

Բյուրոյի նիստին մասնակցում էին Բյուրոյի նախագահ, Ֆինլանդիայի վիճակագրության գլխավոր տնօրեն տ. Մարյո Բրուունը,
Ավստրիայի վիճակագրության գլխավոր տնօրեն պ. Կոնրադ Պիսենդորֆերը,
Կանադայի վիճակագրության գլխավոր վիճակագիր պ. Անիլ Արորան, Կանադայի վիճակագրության միջազգային համագործակցության և նորարարության մեթոդաբանության կենտրոնի տնօրեն տ. Սյուզի Ֆորտիերը, Իռլանդիայի Կենտրոնական վիճակագրության գրասենյակի գլխավոր տնօրեն պ. Պոդրաիգ Դալտոնը, Մեքսիկայի վիճակագրության, աշխարհագրության և ինֆորմատիկայի ազգային ինստիտուտի նախագահ պ. Ջուլիո Սանտաելլան, Լեհաստանի վիճակագրության նախագահ պարոն Դոմինիկ Ռոզկրուտը, Շվեյցարիայի դաշնային վիճակագրության գրասենյակի փոխտնօրեն, ռեգիստրների բաժնի պետ պ. Բերտրան Լայիսոնը, Եվրամիության Վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) գլխավոր տնօրեն տ. Մարինա Կոտցևան, Եվրոստատի թիմի ղեկավար տ.Մարիա Սանտոսը, ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսի գլոբալիզացիայի և զարգացման ռազմավարությունների բաժնի վիճակագրության և տեղեկատվության

մասնաճյուղի պետ պ. Սթիվ Մաքֆիլին, Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության վարչության տնօրեն, գլխավոր վիճակագիր պ. Ռաֆայել Դիեզ դե Մեդինան, Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության վարչության ավագ վիճակագիր պ. Կիերան Վալշը, Հեռահաղորդակցության միջազգային միության ավագ վիճակագիր տ. Էսպերանզա Մագփենթեյը, Առևտրի համաշխարհային կազմակերպության խորհրդատու պ. Մարկ Բաչետտան, Առևտրի համաշխարհային կազմակերպության միջազգային առևտրի վիճակագրության բաժնի պետ պ. Անդրեաս Մայերը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժնի տնօրեն տ. Լիդիա Բրատանովան, Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի քարտուղար տ. Թիինա Լուիջին, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժնի ներկայացուցիչներ պ. Կարսեն Բոլսենը, պ. Սթիվեն Վայլը, պ. Անդրես Վիկաթը և պ. Ժոզե Պալասինը, որպես մշտական դիտորդներ՝ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ պ. Անդրեյ Կոսարևը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության վիճակագրության տնօրինության տնօրեն տ. Մարտին Դյուրանը:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ Ս. Մնացականյան